



**«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Հայկական հարցը Բեռլինի վեհաժողովում: Թեմայի դասավանդման առանձնահատկությունները 11-րդ դասարանում

ԱՌԱՐԿԱ Հայոց պատմություն

ՀԵՂԻՆԱԿ Ռոզա Հակոբյան

ՄԱՐԶ Արմավիր

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ «Տիգրան Մեծ»-ի անվան ՌՄՀ վարժարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ԳԼՈՒԽ 1. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԸ ԲԵՌԼԻՆԻ ՎԵՀԱԺՈՂՈՎՈՒՄ	7
1.1 Պատվիրակության կազմումը.....	7
1.2 Պատվիրակության գործունեությունը.....	10
1.3 Հայկական հարցը Բեռլինի վեհաժողովում	12
ԳԼՈՒԽ 2. ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 11-ԲԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ	18
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	25
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ	29
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	30
ՀԱՎԵԼՎԱԾ	

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը: Հայկական հարցն իր ձևավորման և զարգացման ճանապարհին՝ որպես միջազգային հարց և քաղաքական խնդիր, ունեցել է մի քանի փուլ: 1878 թվականին արևմտահայերի հարցն առաջին անգամ Օսմանյան Թուրքիայի ներքին խնդրից վերածվեց միջազգային քննարկման՝ հիմք դնելով Հայկական հարցի միջազգայնացմանը, որտեղ հպատակ արևմտահայերի համար պետք է բարենորոգումներ անցկացվեր և նրանց համար ապահովվեր անվտանգության երաշխիքներ: Սակայն Հայկական հարցն աստիճանաբար ընդլայնվեց և վերածվեց ոչ միայն արևմտահայությանը այլև արևելահայությանը վերաբերվող խնդրի:

Հայկական հարցը միջազգային դիվանագիտության մեջ առաջին անգամ քննարկվեց 1878թ. Սան Ստեֆանոյի պայմանագրում, որտեղ Օսմանյան կայսրությունը ընդունեց այն փաստը, որ կայսրությունում կա հպատակ մի տարածք, որը կոչվում է Հայաստան և այնտեղ անհրաժեշտ է իրականացնել բարենորոգումներ: Սակայն ինչպես հետագայում ցույց տվեցին իրադարձությունները Բեռլինի կոնգրեսը շրջադարձային եղավ արևմտահայության համար՝ վճռելով նրանց ճակատագիրը, քանի որ պայմանագիրը ոչ միայն չնպաստեց արևմտահայերի համար բարենորոգումներ իրականացնելուն, այլ նաև Օսմանյան Թուրքիային հնարավորություն տվեց հարցը լուծել յուրովի՝ կոտորածներ իրականացնելով:

Հայկական հարցը Բեռլինի կոնգրեսում մնաց բաց և անավարտ: Եվրոպական տերությունները, սահմանափակելով Ռուսաստանի իրավունքները Արևմտյան Հայաստանի նկատմամբ, Հայկական հարցը բարձրաձայնում կամ հիշում էին այն ժամանակ, երբ պետք էր իրենց Թուրքիայի նկատմամբ ճնշում գործադրելու համար: Հայկական հարցը Աբդուլ Համիդի ձեռքում դարձավ հայ բնակչության ֆիզիկական բնաջնջման պատճառ:

Ամփոփելով վերը ներկայացվածը, կարող ենք փաստել, որ սույն հետազոտության թեմայի արդիականությունը, գործնական նշանակությունն ու կարևորությունը պայմանավորված է վերը նշված հանգամանքներով: Հայկական հարցի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ոչ միայն իմանալ Հայկական հարցի ձևավորման պատմությունը, այլ նաև հասկանալ միջազգային դիվանագիտության առանձնահատկությունները, բացահայտել, մեկնաբանել և գնահատել մեծ տերությունների դիրքորոշումները Հայկական հարցի հետ կապված: Այդ ամենի իմացությունը, իրադարձությունների զարգացումները ճիշտ

ընկալելը՝ կօգնի գերծ մնալ դիվանագիտական քաղաքականություն վարելու մեջ նույն սխալները կրկնելուց:

Հայկական հարցի չլուծված հետևանքները սև գույնով ներկեցին հայոց պատմության էջերը: Նախ կոտորածներից մինչև Հայոց մեծ եղեռն, հետո՝ Արցախյան խնդիր, որը դարձավ ոչ միայն մարդկային այլ նաև տարածքային կորուստների պատճառ: Ինչպես առաջ, այնպես էլ հիմա օտար երկրները որդեգրեցին նույն քաղաքականության սկզբունքը՝ սեփական շահը վեր դասելով մարդկային կյանքից:

Թեման դպրոցում դասավանդելիս անհրաժեշտ է աշակերտների մոտ ձևավորել և զարգացնել պահանջատեր լինելու իրավունքը, քանի որ այսօր մեր առջև դրված է երկու գերխնդիր՝ Արցախի հարցը և Ցեղասպանության ճանաչումը:

Յուրաքանչյուր հայի գիտակցության մեջ պետք է սերմանել և հասունացնել ազգային շահ հասկացությունը: Աշակերտները պետք է կարողանան ճիշտ կապ հաստատել պատմական անցյալի և ներկայի միջև՝ հասկանալու համար մեծ տերությունների վարած քաղաքականությունը: Զուգահեռներ տանելով անցյալի և ներկայի միջև փորձել գերծ մնալ նույն սխալները կրկնելուց, քանի որ պատմությունը սիրում է կրկնվել և այսօր դա իր պարզ արտացոլումն է գտել մեր իրականությունում:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Սույն հետազոտության նպատակն է ուսուցման ժամանակ ներկայացնել պատմական իրադարձությունները, վերլուծել հանգամանքները: Ներկայացնել Բեռլինի վեհաժողով հրավիրելու պատճառները, արևմտահայ գործիչների գործունեությունը: Ուսումնասիրել ինքնավարության ծրագրերը, հայկական պատվիրակության գործունեությունը Եվրոպայում և Ռուսաստանում, մեծ տերությունների դիրքորոշումները Հայկական հարցի նկատմամբ, օտարերկրյա դիվանագետների, Օսմանյան կայսրության ներկայացուցիչների և արևմտահայ պետական գործիչների վերաբերմունքը Հայաստանի ինքնավարության գաղափարի հանդեպ:

Թեմայի արդյունավետ ուսուցման նպատակն է ընտրել այնպիսի մեթոդական համալիր, որը հենվելով համագործակցային ուսուցման տեխնոլոգիաների վրա կնպաստի աշակերտների կողմից նյութի արդյունավետ յուրացմանը: Նպատակ ենք ունեցել ընդգծելու Հայկական հարցի խորքային գիտելիքների հաղորդման կարևորությունն ու նշանակությունը աշակերտների համար:

Սույն հետազոտության ընթացքում նշված նպատակի իրագործման համար առաջադրել ենք հետևյալ խնդիրները.

1. Քննարկել Հայկական հարցի միջազգայնացման գործընթացը: Վեր հանել ռուս-թուրքական հաշտության պայմանագիրն և դրա հետևանքները արևմտահայերի համար:
2. Ուսումնասիրել Սան Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերում Արևմտյան Հայաստանին և հայերին վերաբերող հոդվածներն ու ձևակերպումները:
3. Մեկնաբանել հայկական պատվիրակության գործունեությունը, նրանց գործունեության առանձնահատկությունները:
4. Քննարկել Ռուսաստանի հաղթանակի հակառակ կողմը, և Անգլիայի վարած քաղաքականության հետևանքները, որոնք շրջադարձային եղան արևմտահայերի համար:
5. Վերլուծել արևմտահայության համար Բեռլինի վեհաժողովի հետևանքները:
6. Առաջարկել նոր մոտեցումներ «Հայկական հարցը Բեռլինի վեհաժողովում» թեմայի համար:

Հետազոտության գործնական և տեսական նշանակությունը: Տվյալ նյութի հիման վրա կատարել ենք համակարգումներ: Հետազոտությունը տեսական նշանակություն ունի հիմնախնդրի շուրջ հետազոտություններ կատարողների համար: Հետազոտության մեջ ներկայացրել ենք ժամանակակից մեթոդներ, որոնք կիրառվել են գործնականորեն: Մեթոդների օգնությամբ աշակերտները հեշտությամբ են յուրացրել ավելի ամրապնդել նյութը:

Մեթոդներ: Հետազոտությունը իրականացվել է ժամանակակից մեթոդների միջոցով: Ժամանակակից մեթոդների ճիշտ ընտրությունն և կիրառումը առաջացրել է հետաքրքրություն աշակերտների մոտ՝ դասին ամբողջովին ներգրավվելով նրանց: Ուսումնասիրության մեթոդներն ընտրվել են մեր առջև դրված նպատակին, հիմնախնդիրներին համապատասխան: Կիրառել ենք m-աձև աղյուսակներ, Խառնված հերթականություններ, ԳՈՒՍ, Մտքի քարտեզ, Քառաբաժան մեթոդները: Դասի ամփոփումն իրականացրել ենք նաև մեր կողմից առաջարկած «Ի՞նչ, Որտե՞ղ, Ե՞րբ» մեթոդով, որով ստուգվել է աշակերտների կողմից յուրացված գիտելիքները:

Դերային խաղի միջոցով աշակերտների հետ տեղափոխվել ենք տվյալ ժամանակաշրջան, վեր ենք հանել պատմական կերպարներն և իրականացրել ապրումակցում:

1. **Ուսումնասիրություն:** Ուսումնասիրել ենք թեմայի էությունն ու բովանդակությունը, ծանոթացել՝ Հայկական հարցը Բեռլինի վեհաժողովի վերաբերյալ դասագրքային նյութի ընդգրկվածությանը:
2. **Համեմատություն, վերլուծություն:** Թեման ուսուցանել ենք համեմատության մեթոդով. համադրել, հակադրել ենք Սան Ստեֆանոյի և Բեռլինի վեհաժողովի պայմանագրերը, ուսումնասիրել և կատարել ենք համապատասխան վերլուծություններ՝ պայմանագրերի դրական և բացասական կողմերը վեր հանելով, վերլուծել ենք հայկական պատվիրակության գործունեությունը և նրանց կողմից ներկայացված ծրագրերը:

Հետազոտության առարկան և ժամանակագրական շրջանակը: Սույն հետազոտության առարկան է հանդիսանում «Հայկական հարցը Բեռլինի վեհաժողովում» և քննարկվող թեմայի առանձնահատկությունները: Հետազոտության ժամանակագրական շրջանը ընդգրկում է 1878 թվականին տեղի ունեցող իրադարձություններն, որոնք վերաբերվում են Արևմտյան Հայաստանին: Այդ ժամանակահատվածում միջազգային մակարդակով քննարկվեց Արևմտյան Հայաստանի ապագան: Արևմտյան Հայաստանի ապագայի շուրջ բանակցությունները, քննարկումները, մեծ տերությունների և հայկական հասարակության մեջ տեղի ունեցած որոշումները, դրանց շուրջ ծավալվող իրադարձությունները շրջադարձային եղան արևմտահայության համար: Հետազոտության օբյեկտը հանրակրթական դպրոցում պատմության դասավանդման արդյունավետության բարձրացման գործընթացն է:

Հետազոտության կառուցվածքը և ծավալը: Սույն աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, առաջարկությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Ուսումնասիրության ծավալը համակարգչային 33 էջ է:

ԳԼՈՒԽ 1

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԲԵՌԼԻՆԻ ՎԵՀԱԺՈՂՈՎՈՒՄ

1.1. Պատվիրակության կազմումը

Ռուսաստանը նախապատրաստվում էր Բեռլինի կոնգրեսին մասնակցելու, և այնտեղ պաշտպանելու Սան-Ստեֆանոյի պայմանագիրը, ներառյալ նաև նրա 16-րդ հոդվածը, իսկ Անգլիան ձգտում էր Բեռլինի կոնգրեսում պաշտպանել Կիպրոսի կոնվենցիան¹: Բեռլինի կոնգրեսին առանձնահատուկ կերպով պատրաստվում էր նաև հայ ժողովուրդը, որի անունից գործում էր Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը: Հայրենասեր Ներսեսը իր մի քանի ազդեցիկ համախոհներով թև է առնում և հետևելով դիւանագիտութեան այն սկզբունքին թէ՛ «ամեն միջոց ներելի է նպատակին հասնելու համար», ծրագրում է Տաճկա-Հայաստանի ինքնավարութեան յատակագիծը՝ Բերլինի վեհաժողովին ներկայացնելու համար²:

Որոշվեց պատվիրակություն ուղարկել և՛ Եվրոպա, և՛ Ռուսաստան: Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանը հատուկ պատգամավորություն է ուղարկում Եվրոպական պետությունների արքունիքները՝ «հայոց ցավերը նրանց պատմելու և դեղ ու դարման աղերսելու համար»³:

Պատվիրակության գլխավոր նպատակը ոչ միայն ծրագիրը ներկայացնելն էր մեծ տերություններին, այլև պաշտոնապես փորձում էին լուծում գտնել Հայկական հարցի համար: Գրիգոր Օտյանի խորհրդով Մկրտիչ Խրիմյանը նշանակվեց Եվրոպա մեկնող պատվիրակության ղեկավար, իսկ քարտուղար և թարգմանիչ նշանակվեց Մինաս Չերազը: Բեռլինում նրանց միացավ Ստեփան Փափազյանը, որին նշանակել էր պատրիարքը: Մյուս պատվիրակը, ով պետք է մեկներ Ռուսաստան Պեշիքթաշի արքեպիսկոպոս Խորեն Նարբեյն էր: Յուրաքանչյուր պատվիրակություն ուներ ներկայացնելու իր ծրագիրը: Մ. Խրիմյանի ծրագիրը կազմել էր Գրիգոր Օտյանը, բացի ծրագրից գոյություն ուներ նաև հուշագիր,

¹ Բաղայան Խ., «Հայկական հարցը» Սան-Ստեֆանոյի պայմանագրում և Բեռլինի կոնգրեսում 1878թ., Երևան, 1955, էջ 100:

² «Մուրճ», N 2, Փետրուար, Թիֆլիս 1907, էջ 61:

³ Թառոյան Կ.Չ. «Արևմտահայերի ազատագրական պայքարը XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին», 1980, էջ 74:

տեղեկագիր, որտեղ ներկայացվում էր հայ բնակչության ճշգրիտ թիվը Օսմանյան կայսրությունում: Ըստ այդ տեղեկագրի Օսմանյան կայսրությունում ապրում էր 3 մլն հայ:

Մեկ այլ ծրագիր առաջարկեց եգիպտահայ նշանավոր պետական գործիչ Նուբարը, որին Մ. Խրիմյանը հանդիպեց 1878թ. մարտի 31-ին Փարիզում: Նա առաջարկում էր կոնֆերանսին չներկայանալ լայն ինքնավարության պահանջով՝ գտնելով, որ դա կմերժվեր մեծ տերությունների կողմից: Լավ տեղյակ լինելով Եվրոպայի վարած քաղաքականությանը գիտակցում էր, որ կոնֆերանսին պետք է ներկայացնել չափավոր և ոչ թե ինքնավարություն պահանջող ծրագիր և դա պետք է հիմնված լիներ օսմանյան օրենքների, սուլթանների հայտարարությունների և միջազգային իրավունքի նորմերի վրա, ինչպիսին որ իր կազմած ծրագիրն էր: Ծրագրում Նուբարը հաշվի էր առել և՛ Անգլիայի, և՛ Ռուսաստանի, և՛ Թուրքիայի շահերը, քանի որ գիտակցում էր, որ կողմերից որևէ մեկի անհամաձայնության դեպքում Հայկական հարցը կարող է տապալվել: Ծրագրում Նուբարը չէր օգտագործել ինքնավարություն բառը և չէր խոսել Հայաստանի սահմանների մասին, այլ պահանջում էր լայն լիազորություններով հայ կառավարիչ, դատական, տնտեսական և վարչական բարեփոխումներ⁴: Ծրագիրը կազմելուց հետո, այն ուղարկել է Կ. Պոլիս՝ խնդրելով պաշտոն տալ իրեն, ծրագիրը Բեռլինի կոնգրեսում ներկայացնելու համար: Սակայն այդ ծրագիրը դժգոհություն է առաջացնում Կ. Պոլսում, քանզի նրանք համոզված էին, որ ինքնավարության խնդիրը լուծված էր և ունեին մտավախություն, որ Նուբար փաշան կարող է դառնալ «ինքնավար Հայաստանի» կառավարիչ:

Մյուս պատվիրակը Խորեն Նարբեյն էր՝ հոգևորական: Նա Կ.Պոլսից ուղևորվեց Պետերբուրգ ռուսական արքունիքին արևմտահայերի խնդրագիրը ներկայացնելու նպատակով: Մարտի 14-ին նրան ընդունեց Ռուսաստանի վարչապետ Ա. Գորչակովը, իսկ մարտի 18-ին՝ կայսրը: Ալեքսանդր 2-ը բավարարվեց միայն բարեմաղթանքներ հղելով հայ ժողովրդին, բայց հայկական ծրագիրը Բեռլինում պաշտպանելու խոստումներ չտվեց: Նարբեյը հասկացավ, որ իր ներկայացրած ծրագիրը հաջողություն չունեցավ, և Ներսես Վարժապետյանին ուղղված նամակում բացատրեց, որ չնայած ռուսների սիրալիր ընդունելությանը, գործնական առումով պատասխաններն անորոշ էին⁵: Պատրաստել էին նաև մի համառոտ նախագիծ՝ «Ծրագիր կազմակերպական կանոնագրի Օսմանյան Հայաստանի»,

⁴ Պողոսյան Ս., Հայաստանի ինքնավարության ծրագրերը 1878թ., Երևան, Տիր հրատ., 2018, էջ 88:

⁵ Սարուխան, Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրութիւնը Թիւրքիայում (1860-1910), հ. Ա., Թիֆլիս, Էպոխա տպարան, 1912, էջ 328-329:

որտեղ «սահմանում էր ինքնավարական կազմակերպություն հայկական նահանգների համար»⁶ և որը մյուս պատվիրակության (Մկրտիչ Խրիմյանի և Մինաս Չերազի) միջոցով պետք է ներկայացվեր եվրոպական մեծ պետությունների կառավարություններին մինչև Բեռլինի վեհաժողովի գումարումը: Ծրագրին կից Ներսես Վարժապետյանը ներկայացնում էր նաև հիշատակագիր, Հայաստանի վիճակագրությունը և Հայաստանի քարտեզը: Այն կազմվել էր Ֆրանսիայի արտգործնախարար Վիլիյամ Վադինգտոնի խորհրդով: Ծրագրի նպատակն էր ցույց տալ հայերի ճշգրիտ թիվը Օսմանյան կայսրությունում՝ հերքելով թուրքական կառավարության կեղծ տվյալները:

Այսպիսով, Հայկական հարցը Բեռլինի վեհաժողովում ներկայացնող պատվիրակությունը ղեկավարում էին այնպիսի անձիք, ովքեր չունեին դիվանագիտական փորձ, անտեղյակ էին մեծ տերությունների վարած նենգ քաղաքականությանը, չունենալով իրատեսական և գործուն ծրագիր՝ միջազգային ասպարեզում փորձում էին ձեռք բերել ինքնավարություն, որն էլ հետագայում երաշխիք պիտի դառնար դեպի անկախություն ձեռք բերելուն: Սակայն դրա համար ոչ պայմաններ կային, ոչ էլ Եվրոպան էր մտադիր դա իրականացնել: Պատվիրակությունը ղեկավարում էր Մկրտիչ Խրիմյանը, որը չտիրապետելով որևէ եվրոպական լեզվի, վստահ էր, որ կարող է եվրոպական դիվանագետներին ներկայացնել Արևմտյան Հայաստանի ծանր վիճակը, այնպիսի մի լեզվով «որ համաշխարհային է և տառապանքի լեզուն է միևնույն ժամանակ, այսինքն՝ պիտի լամ»⁷: Այսպիսով, ինչպես հետագա իրադարձությունները ցույց տվեցին մեծ տերությունների ներկայացուցիչներից շատերը պատկերացում նույնիսկ չունեին հայերի մասին, մեր լեզվի ու երկրի մասին և զարմանում էին, երբ իմանում էին որ գոյություն ունի հայերեն լեզու, քանզի ըստ Սոլսբերիի հայերը Թուրքիայում խոսում էին թուրքերեն: Ծրագրերը ի սկզբանե դատապարտված էին անհաջողության, բայց կար մի ծրագիր, որը կարող էր դառնալ արևմտահայերի փրկության միջոց, սակայն դրա դեմ էլ դուրս եկավ պատրիարքը: Դա Նուբարի ծրագիրն էր՝ իրատեսական և իրագործելի:

⁶ Լեօ, Լեօ, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, Ն. Աղանեանցի տպարան, 1915, էջ 62:

⁷ Աղայան Օ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, Գիտություն հրատ., 1976, էջ 76:

1.2. ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Մկրտիչ Խրիմյանն ու Մինաս Չերազը մարտին մեկնում են Եվրոպա: Մարտի 26-ին Հռոմում հայկական պատվիրակությանը ընդունեց Իտալիայի արտգործնախարար կոմս Լուիջի Կորտին: Կորտինի հետ հանդիպման ժամանակ պարզ է դառնում, որ եվրոպացիների պատկերացումները հայկական հարցի վերաբերյալ այդքան էլ հստակ չէին, քանզի վերջինիս համար անհասկանալի էր թե հայերը Թուրքիայի ո՞ր տարածքում են (Եվրոպական թե՞ Ասիական) պահանջում վարչական ինքնավարություն⁸: Հանդիպման ժամանակ Մկրտիչ Խրիմյանը ներկայացնում էր, որ սլավոն ժողովրդից հետո քրիստոնյաների մեջ հայերն են, ովքեր լինելով բազմամարդ ավելի շատ են կրում գրկանքներ, քան մյուս քրիստոնյաները: Կորտին խոստացավ աջակցել: Պատվիրակությունը մեկնեց Փարիզ: Պատվիրակությունը Փարիզում հանդիպումներ է ունեցել Գերմանիայի, Անգլիայի դեսպանների հետ: Պաշտոնական հանդիպում էր ունեցել Ֆրանսիայի արտգործնախարար Վիլյամ Վադինգտոնի հետ և նրա այն հարցին թե արդյո՞ք հայերը էրզրում նահանգի համար են միայն ինքնավարություն խնդրում, Մ. Խրիմյանը բացատրել էր որ ոչ միայն էրզրումի, այլ նաև Վանի նահանգի, ինչպես նաև Դիարբեքիրի ու Տրապիզոնի մի մասի համար՝ ակնկալելով Ֆրանսիայի աջակցությունը: Վադինգտոնը խոստացել էր կոնգրեսում պաշտպանել և աջակցել Հայկական խնդրի լուծմանը, խորհուրդ տալով եվրոպական մյուս երկրների համար (որպեսզի վերջիններս ավելի լավ հասկանան Հայկական հարցը) կոնգրեսում ներկայանան փաստերով, չպահանջեն Լիբանանի նման կարգավիճակ, քանի որ նրանց միջև կա ակնհայտ տարբերություն՝ Լիբանանը չունի թուրք բնակչություն: Ըստ նրա անհրաժեշտ էր ներկայացնել տեղեկագիր և վիճակագրություն, որտեղ նշված պետք է լիներ թե որ երկրի մասին է խոսքը, հայ բնակչության թվաքանակը ըստ գավառների՝ նշելով թե որ գավառներում են հայերը մեծամասնություն և փոքրամասնություն կազմում⁹: Ավելացնելով, որ փաստերով և գործնական քայլերով Հայկական հարցը կավարտվի հաջողությամբ: Հայկական պատվիրակությունը Լոնդոն հասավ ապրիլի 11-ին և այնտեղ մնաց մինչ հունիսի սկիզբը: Պատվիրակության հետ Լոնդոնում հանդիպում չունեցան Վիկտորյա թագուհին և վարչապետ Բենջամին Դիզրայելին՝ լորդ Բիքոնսֆիլդը: Վերջինս հրաժարվեց ընդունել

⁸ Հայաստանի կոչնակ, Նիւ Եորք, 1923, թիւ 18, մայիսի 5:

⁹ Գաբրիելեան Խ., Հայկական հարցը Արեւելեան հարցի մէջ (1860-1880), Պէյրուք, 1962, էջ 200:

պետություն չներկայացնող հայ պատվիրակներին՝ քանզի այդ օրերին տեղի էր ունենում անգլո-թուրքական գաղտնի բանակցությունները՝ մտածելով, որ կարող է այդ հանդիպումն ազդել անգլո-թուրքական բանակցությունների վրա: Մայիսի 10-ին հանդիպում են ունեցել Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Սոլսբերիի հետ:

Այսպիսով հայկական պատվիրակության գործունեությունը թե՛ Եվրոպայում, թե՛ Ռուսաստանում սպասելի արդյունքի չհասավ, թեև որոշ գործիչներ համակրանքով արտահայտվեցին հայերի նկատմամբ՝ նշելով, որ չափավոր պահանջներով ներկայացնելու դեպքում այն կհասներ որոշակի հաջողության: Սակայն հաշվի չառնելով դիտողությունները հայկական պատվիրակությունը մեկնեց Բեռլին: Անհաջողության պատճառներից մեկն էլ այն էր, որ հայերը մտածում էին, որ դիմելով քրիստոնյա Եվրոպային կստանան աջակցություն՝ անտեսելով, այն հանգամանքը, որ յուրաքանչյուր երկիր իր շահով էր առաջնորդվում՝ չմտածելով այն մասին, «թե ինչու Անգլիա կամ Ռուսիա պիտի ազատագրեին զինք, պարզապես իր քրիստոնեայ կամ մշակութային ազգ մը ըլլալուն համար: Հայութեան քաղաքական միտքը երբեք լրիւ չըմբռնեց թէ քաղաքական կեանքի մէջ միայն շահն է ամեն ինչ վճռողը, եւ ուժն է միայն հաշի առնողը»¹⁰: Անգամ ուշադրություն չդարձրեցին նրան որ «Թուրքիան չուզեց ինքնավարություն տալ Բուլղարիային և նախընտրեց պատերազմը, ինչպե՞ս կարող էր հեշտությամբ համաձայնել հայկական ինքնավարությանը»¹¹, եթե դա չբխեր իր իսկ շահերից: Իրականում Աբդուլ Համիդի «բարեհաճությունն» էլ բացատրվում էր նրանով, որ հայերի ծրագրում կար ինքնավարության պահանջ, իսկ դա նշանակում էր ռուսական զորքի հեռանալը Օսմանյան Թուրքիայի տարածքներից:

¹⁰ Վեմ, N 4, 1938, էջ 17:

¹¹ Կիրակոսյան Ջ., Կիրակոսյան Ջ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 70-ական թթ.), Երևան, Հայաստան հրատ., 1978, էջ 220:

1.3. Հայկական հարցը Բեռլինի վեհաժողովում

Լոնդոնից Մ. Խրիմյանն ու Մ. Չերազը մեկնեցին Փարիզ՝ ցանկանալով կրկին հանդիպել Վադինգտոնին, սակայն նրա հետ հանդիպումը չկայացավ. նա մեկնում էր Բեռլին: Իրենք նույնպես ուղևորվեցին Բեռլին, որպես գերմաներենի թարգմանիչ նրանց միացավ Տաճատ Պեյլերյանը՝ Փարիզից, իսկ Ստեփան Փափազյանը Բեռլին հասավ մայիսի 29-ին: Հունիսի 2-ին էլ նրանց միացավ Խորեն Նարբեյը:

1878թ. հունիսի 1 (13)-ին բացվեց Բեռլինի կոնգրեսը, այն տևեց մեկ ամիս՝ ունենալով քսան նիստ: Տարբեր երկրների ներկայացուցիչներ հանդիպելով Բեռլինում ձգտում էին նոր տարածքներ ձեռք բերել՝ օրինակ Ավստրո-Հունգարիայի արտգործնախարար Ադրաշինը իր հետ բերել էր Ռուսաստանի հետ 1876թ. հուլիսի 6-ին կնքված Ռայխշտադտյան պայմանագիրը, Բիքոնսֆիլդը՝ 1878թ. մայիսի 30-ին և հունիսի 4-ին Ռուսաստանի և Թուրքիայի հետ կնքած պայմանագրերը:

Հայ պատվիրակությունը Բեռլինում շարունակում էր հանդիպումներ ունենալ մյուս տերությունների պատվիրակների հետ: Սակայն բոլոր հանդիպումները եզրափակվել էին միայն խոստումներով, գործնական քայլերի ոչ-ոք չէր դիմել:

Բեռլինի կոնգրեսի առաջին նիստը սկսվեց հունիսի 1 (13)-ին, նախագահ ընտրվեց Գերմանիայի կանցլեր Բիսմարկը, և նրա առաջարկությամբ Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի կետերը քննարկվեցին ոչ թե հաջորդականությամբ, այլ ըստ կարևորության: Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը, համարվելով անկարևոր, կոնգրեսում քննարկվեց վերջին նիստերում: Ռուսաստանը հայտնվել էր բարդ իրավիճակում, քանի որ կոնգրեսին մասնակից եվրոպական տերությունները թշնամական վերաբերմունք էին տածում նրա նկատմամբ: Անգլիան Ռուսաստանին կոնգրեսում մեկուսացնելու համար Իտալիային առաջարկել էր գրավել Ալբանիան, Ավստրո-Հունգարիային խոստացել էր պաշտպանել Բալկաններում, իսկ Ֆրանսիային հասկացրել էր որ դեմ չի լինի, եթե Ֆրանսիան նվաճի Թունիսը: Դա Ֆրանսիայի շահերից էր բխում, քանի որ Անգլիայի համաձայնությամբ ընդարձակում էր իր գաղութային տարածքները¹²:

¹² Սահակյան Ռ., Հայկական հարցը և Ֆրանսիան (1870-1890-ական թթ.), «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1994, թիվ 1-2, էջ 134:

Բեռլինի կոնգրեսի նիստերում հակամարտությունները ռուսական և անգլիական ներկայացուցիչների միջև սրվում էին հիմնականում Բուլղարիայի, Արևմտյան Հայաստանի և Բաթումի հարցերը քննարկելիս: Բեռլինի կոնգրեսի նիստի ընթացքում քննարկվում էր Սան Ստեֆանոյի պայմանագրի կետերը, որոնք տարբեր վեճերի, տարաձայնությունների առիթ էին հանդիսանում: Կարևորագույն հարցերը, սակայն, լուծվում էին Ռուսաստանի, Ավստրո-Հունգարիայի և Անգլիայի ներկայացուցիչների առանձին հանդիպումների ժամանակ և Բեռլինի պայմանագրում ավելանում էին որպես առանձին հոդվածներ: Թուրքական պատվիրակությունն առաջին իսկ օրից զգում էր Անգլիայի աջակցությունը իր նկատմամբ. անգլիական ներկայացուցիչը՝ Բիքոնսֆիլդը, ջանք չէր խնայում Թուրքիայի կազմում թողնել Սոֆիան: Անգամ ռուսական պատվիրակների հանդիպումների ժամանակ, անգլիական կողմը պնդում էր, որպեսզի Ռուսաստանը Թուրքիային վերադարձներ ոչ միայն Էրզրումը, Ալաշկերտի հովիտն ու Բայազետը, այլև Բաթումը, Կարսն ու Արդահանը: Բեռլինի առաջին նիստերի մեծ մասը վերաբերվում էր բուլղարական հարցին: Բեռլինի կոնգրեսում 1878թ. հուլիսի 1-ին կնքվեց պայմանագիր, որը բաղկացած էր վաթսուներես հոդվածից: «Պայմանագիրը կազմված էր 830 էջից: Եվրոպական երկրներն ի օգուտ Հայկական հարցի այդպես էլ որոշում չկայացրեցին, իսկ Այա Ստեֆանոյի պայմանագիրը ամբողջությամբ անտեսեցին»¹³:

Հուլիսի 4, 6, և 8-ին Բեռլինի կոնգրեսում քննվեց Հայկական հարցը: Հայ պատվիրակներին թույլ չտրվեց մասնակցել քննարկմանը, նրանց իրավունք չտրվեց մասնակցել կոնգրեսի աշխատանքներին, անգամ այն նիստերին, որտեղ քննարկվում էր Արևմտյան Հայաստանի և Հայկական հարցին վերաբերող հարցերը: Հայկական պահանջների հուշագիրն էլ անուշադրության մատնվեց տերությունների կողմից, նույնիսկ չընթերցվեց:

Մեզ համար կարևոր նշանակություն ունեին պայմանագրի 58-61-րդ հոդվածները, որոնք վերաբերվում էին Արևմտյան Հայաստանի տարածքների բաժանման և ռուս-թուրքական սահմանային հարցերի քննարկմանը: 58-րդ հոդվածով Ռուսաստանին էր անցնում Արդահանը, Կարսը և Բաթումը իր նավահանգստով ¹⁴: 59-րդ հոդվածով հայտարարվում էր ռուսաց կայսեր մտադրությունը, ըստ որի Բաթումը պետք է դառնար առևտրական ազատ

¹³ Yerasimos S., Ahmad F., Dadrian V., Copeaux E., Maraşliyan L., Maleville G., Loti P., Feigl E., Shaw S., Shaw E., Ahmed K., Alboyacıyan A., Hartill L., Harbord G., Նշվ. Աշխ., s. 34:

¹⁴ Ազատյան Հ., Բախտորոշ պայմանագրեր, Երևան, Տիգրան Մեծ, 2002, էջ 55:

նավահանգիստ: Սան-Ստեֆանոյի պայմանագրի 19-րդ հոդվածը Բեռլինի կոնգրեսում ամբողջապես ենթարկվեց փոփոխության՝ դառնալով 60-րդ հոդված, ըստ որի Ռուսաստանին զիջված Ալաշկերտի հովիտը, և Բայազետ քաղաքը վերադարձվելու էին Թուրքիային, իսկ Բարձր Դուռը Պարսկաստանին էր զիջելու Կոտուր քաղաքը իր տարածքով: Ամենաքննարկվող և վիճելի հարցերն առաջանում էին, երբ քննարկվում էր Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը: 16-րդ հոդվածի քննարկումը սկսվեց 1878թ. հուլիսի 4-ին Բեռլինի կոնգրեսի 12-րդ նիստում, որտեղ և խոսվում էր Հայաստանի մասին: Բեռլինի կոնգրեսում Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի դեմ առաջինը ելույթ ունեցավ Սոլսբերին, ըստ նրա բարենորոգումները կարող էին կատարվել նաև առանց ռուսական զորքի ներկայության և, չթաքցնելով Թուրքիայի նկատմամբ համակրանքը, հանդես է եկել հայտարարությամբ, որտեղ ասում էր, որ դեմ չէր Հայկական հարցի լուծմանը, սակայն պահանջում էր ռուսական զորքի դուրս բերումը Արևմտյան Հայաստանից մինչ բարեփոխումներ անցկացնել¹⁵: Պ.Շուվալովը Սոլսբերիի հայտարարությանը ի պատասխան հայտարարել էր, որ ռուսական զորքերի դուրս գալը մինչ բարեփոխումների իրականացումը հայկական նահանգներում հանգեցնելու էր հայերի նկատմամբ բռնությունների: Սան Ստեֆանոյի 16-րդ հոդվածը առաջ էր բերում տարաձայնություններ, որը լուծելու համար որոշվել էր այն քննարկել կոնգրեսի հաջորդ նիստում՝ հուլիսի 6-ին: Շուվալովը անգլո-ռուսական հակասությունների մասին նամակով հայտնել էր Ալեքսանդր 2-ին, և Պետերբուրգից ստանալով նոր հրահանգներ՝ հուլիսի 6-ին վերսկսել էր քննարկումները: Հուլիսի 6-ին Սոլսբերին խոսելով Սան Ստեֆանոյի 16-րդ և 19-րդ կետերի մասին հայտարարել էր, որ դրանք թուլացնում են Բ. Դոան ազդեցությունն Ասիայում: Նրա առաջարկով կոնգրեսը Սան Ստեֆանոյի 16-րդ հոդվածի փոխարեն ընդունեց նորը՝ Բեռլինի տրակտատի 61-րդ հոդվածը՝ հակառակ ռուս պատգամավորների կամքին. դա արդեն իսկ համաձայնեցված էր թուրքական պատվիրակության հետ: 61-րդ հոդվածը ընդգրկում էր հետևյալը. «Բարձր Դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման իրագործել հայաբնակ մարզերում տեղական կարիքներից հարուցված բարելավումներն ու բարենորոգումները և ապահովել հայերի անվտանգությունը չերթեզնդներից և քրդերից: Բարձր Դուռը տերություններին պարբերաբար կհաղորդի այն միջոցների մասին, որոնք ինքը է

¹⁵ Այսինքն Անգլիայի հիմնական նպատակն էր սուլթանին զերծ պահել ռուսական վերահսկողությունից, զրկել թուրքական կառավարության վրա ազդեցություն գործելու հնարավորությունից և հետագայում՝ Հայկական հարցը իր ձեռքում պահելով, միջամտել Թուրքիայի ներքին գործերին:

առել այդ նպատակի համար, իսկ տերությունները կհսկեն դրանց կիրառմանը»¹⁶: Հողվածն ընդունվեց առանց քննարկման՝ հաշվի չառնելով ռուսական պատվիրակության դեմ լինելը:

Առաջին հայացքից այս հողվածը կարծես Սան Ստեֆանոյի 16-րդ հողվածի բովանդակության կրկնությունը լիներ, սակայն այս հողվածով ամբողջությամբ ձախողվեց Հայկական հարցի լուծումը: Այն կրելով ավելի ձևական բնույթ, քան Սան Ստեֆանոյի 16-րդ հողվածը, սերտորեն իրար էր կապում պայմանագիրը ստորագրող կողմերին, քանի որ Թուրքիան նրանց էր տեղեկացնելու իր ձեռնարկած միջոցների մասին, որոնք կիրառելու էր հայերի անվտանգությունը պահպանելու և բարենորոգումներ իրականացնելու ժամանակ¹⁷, սակայն այս հողվածը բացասական ազդեցությունն ունեցավ հայերի համար.

Այսպիսով Բեռլինի կոնգրեսում Հայկական հարցը իր արդարացի լուծումը չստացավ: Միակ արդյունքը որին հասավ արևմտահայությունը դա այն էր, որ Օսմանյան կայսրության ներքին խնդիր լինելուց այն ձեռք բերեց միջազգային բնույթ՝ դառնալով միջազգային դիվանագիտության հարց, որը եվրոպական տերությունների ձեռքում վերածվեց Թուրքիայի ներքին գործերին միջամտելու միջոց: Բեռլինի միջազգային վեհաժողովի որոշումները անտեսեցին ինչպես հարավային սլավոնական ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի շահերը: Բեռլինի կոնգրեսում ռուսական կողմը դիվանագիտության պարտությունն էր, զիջումներ կատարեց, քանի որ խուսափեց նոր պատերազմից: Ն. Իգնատևը համեմատելով երկու պայմանագրերը նշել է, որ Սան Ստեֆանոյի պայմանագիրը համեմված էր ռուսական սոուսով, իսկ Բեռլինի պայմանագրում այն փոխվեց՝ համեմվելով ավստրո-հունգարական սոուսով¹⁸: Ռուսական կողմը նույնպես գտնում էր, որ Բեռլինի պայմանագիրը իրենց պարտությունն էր: Կոնգրեսի արդյունքներից դժգոհ էր նաև Թուրքիան, քանի որ եվրոպական մասում կորցրել էր իր հողերի կեսը¹⁹, որովհետև մինչ ռուս-թուրքական պատերազմը նրա տարածքը այդտեղ կազմում էր

¹⁶ Ազատյան Հ., նշվ աշխ., էջ 56, նաև Նոր-Դար, 1895, N 21:

¹⁷ ՀԱԱ, Ֆ. 56, ց. 14, գ. 96, թ. 18:

¹⁸ Сан-Стефано. Записки графа Н. П. Игнатьева. СЪ примечаниями А. А. Башмакова, "Петроградъ", 1916, с.105: <https://viewer.rsl.ru/ru/rsl01004210503?page=1&rotate=0&theme=white> (05.02.2022, 21:00):

¹⁹ Լեօ, Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հատոր առաջին, Երևան, Շաղիկ հրատ., 1994, էջ 104:

365. 300 քառ. կմ, իսկ Բեռլինի կոնգրեսից հետո՝ 200000 քառ. կմ տարածք, իսկ բնակչությունը տասնմեկ միլիոնից դարձավ չորս միլիոն վեց հարյուր հազար²⁰:

61-րդ հոդվածը տարբեր կերպ էր մեկնաբանվում հայ մտավորականության և հասարակության կողմից՝ ունենալով դրական և բացասական արձագանք: Մինաս Չերազը վերադառնալով կոնգրեսից հայտարարել էր. «Պերլինի Վեհաժողովին մի ոսկեհանք շահեցանք. մեզ անկ է խիզախել եւ հանել ոսկին»²¹՝ գտնելով, որ Բեռլինի կոնգրեսը հայերի համար ավելի նպաստավոր էր քան Սան Ստեֆանոյի պայմանագիրը: Սակայն գտնվեցին նաև այնպիսիները, որոնք ճիշտ գնահատելով կատարվածը գիտակցեցին, որ բացի հայ ժողովրդի միասնությունից ոչ-ոք չի կարող լուծել Հայկական հարցը՝ կոչ անելով չիուսահատվել և շարունակել ազատագրական պայքարը: Անգամ անգլիամետ կողմնորոշում ունեցող Մկրտիչ Խրիմյանը կոնգրեսից հետո հասկանալով «բարեգութ» Անգլիայի և մյուս տերությունների վարած քաղաքականությունն եկավ այն համոզման, որ «իրավունքն ուժի մեջ է և ոչ թե խնդրագրերի: Ազգն իր իրավունքը կարող է պաշտպանել սրի ուժով և ոչ թե աղերսագրերի»²² անընդհատ մեջբերելով. «Բեռլինի կոնգրեսի դրան վրա գրված էր՝ իրավունքը ուժովինն է, քաղաքագիտությունը գթություն չունի, իրավունքն ալ սուրի ծայրին է: Հայաստանցինե՛ր, սիրեցե՛ք երկաթը, ձեր փրկությունը երկաթով կլինի»՝ բերելով «երկաթե շերեփի» օրինակը՝ Բեռլինի մեջ տարբեր ազգերի հարիսա էին բաժանում: Բոլորը եկան իրենց երկաթե շերեփներով, վերցրեցին ու տարան իրենց բաժինը, քանզի պատվիրակների կողքին կային քաջեր, «որոնց վրայէն կախուած սուրերէն արիւն կը վազէր: Եվ եթե այդ ժամանակ իր կողքին էլ կանգնած լինէին զեյթունցի, սասունցի և մշեցի քաջերից, ապա նրանք էլ իրենց «արիւնտ թուրերը երոպացոց աչքը խոթելով»²³ Խրիմյան Հայրիկին հնարավորություն կտային հայերի համար իրենց բաժինը վերցնելու, սակայն շերեփի փոխարեն նրա ձեռքում միայն աղերսագիր էր, որն էլ հավելց հարիսայի մեջ: Գ. Արծրունին գրում էր, որ հույսը սեփական ազգի վրա պետք է դնել, իսկ Գ.

²⁰ Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Հ. 7, Թուրքական աղբյուրներ, Հ. 4, Օսման Նուրի, Աբդուլ Համիդ երկրորդը և նրա իշխանության շրջանը, Երևան, Հայկական ՄՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ., 1972, էջ 151-152:

²¹ Չերազ Ս., Թե՛ ինչ շահեցանք Պերլինի վեհաժողովին, Կոստանդնուպոլիս, Տնտեսեան տպագրութիւն, 1878, էջ 29:

²² Բայրամյան Լ.Ա., Արևմտյան Հայաստանը Անգլիական իմպերիալիզմի պլաններում (XIX դարի վերջին քառորդում), Երևան, Հայաստան հրատ., 1982, էջ 130-131:

²³ Պարսամյան Վ. Ա., Հարությունյան Շ.Ռ., Հայ ժողովրդի պատմություն, Երևան, Լույս հրատ., 1979, էջ 235-236:

Մրվանձտյանը գրում էր, որ Հայաստանի մեջ է բուն Հայկական խնդիրը, իսկ մենք Բեռլինի մեջ ենք փնտրում այն, այսինքն աստիճանաբար հասունացավ այն միտքը, որ այս խնդրի լուծողը հենց իրենք են: Հուսախաբ լինելով դիվանագիտական ուղիներով այն լուծելու հնարավորությունից՝ հայ գործիչները թուրքական բռնակալությունից իրենց ժողովրդի ազատագրվելը կապեցին ազատագրական պայքարի հետ՝ հենվելով սեփական ուժի վրա և գիտակցելով, որ ազատությունը ձեռք է բերվում միայն զենքով:

Բեռլինի վեհաժողովից հետո արևմտահայերի վիճակը գնալով ավելի էր վատթարանում: Մ. Խրիմյանի և Ներսես պատրիարքի ջանքերը՝ վերստին միավորել և միահամուռ ուժերով դիմագրավել սուլթանական կայսրության ոտնձգություններին, կասեցվեցին թուրքական կառավարության կողմից կազմակերպված ջարդերի պատճառով:

Այսպիսով, և՛ ժամանակը, և՛ իրավիճակը բարեգութ չգտնվեցին հայերի համար:

ԳԼՈՒԽ 2

ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատմության ուսուցումը ճիշտ և նպատակաուղղված իրականացնելու համար անհրաժեշտ է որոշել հայոց պատմության յուրաքանչյուր թեմայի բովանդակությունն ու խնդիրները և նրա դերը պատմական ճանաչողության, մտածողության ու դաստիարակության գործում, ուշադրություն դարձնել նոր տեխնոլոգիաների կիրառման, մեթոդների ընտրության և դրանք ճիշտ կիրառելու վրա՝ առաջացնելով հետաքրքրություն աշակերտների մոտ՝ դասին ամբողջովին ներգրավվելու համար: Մեթոդների իրականացումը երեխաների մոտ խթանում է հետաքրքրությունն առարկայի հանդեպ, ակտիվացնում է դասարանը, զարգացնում՝ որոնողական, ստեղծագործական կարողությունները, համագործակցային մեթոդներով աշխատելու ունակությունը, աշակերտների մոտ ապահովում է գիտելիքին հասնելու ճանապարհին գործուն մասնակցություն, ձևավորում է նրանց մոտ կարողություններ և հմտություններ, դարձնում նրանց գիտելիք ձեռքբերող և ակտիվ յուրացնող:

«Հայկական հարցի միջազգայնացումը» դասավանդվում է հանրակրթական հիմնական դպրոցի 8-րդ և ավագ դպրոցի 11-րդ դասարաններում: Սակայն 8-րդ և 11-րդ դասարանների համար նախատեսված թեմայի բովանդակությունը միմյանցից տարբերվում են նյութի ծավալով: Եթե 8-րդ դասարանում կարող ենք առաջնորդվել դասագրքում զետեղված բովանդակությամբ՝ ներկայացնելով նաև լրացուցիչ տեղեկություններ, ապա 11-րդ դասարանում (հաշվի առնելով հոսքը) հարկավոր է աշակերտների մոտ զարգացնել հետաքրքրությունը դեպի պատմական իրադարձությունները, փաստերը, մեծ տերությունների և Օսմանյան կայսրության վարած քաղաքականությանը, արևմտահայերի ձգտումներին՝ առաջ քաշելով իրենց վարկածները, մեկնաբանման մեջ ցուցաբերելով այլընտրանքային մոտեցում, համեմատականներ տանելով փորձել բացատրել ի՞նչ կլիներ հողվածների իրականացման դեպքում (քանի որ արդեն պատմությունը այսօր ցույց է տալիս դրանց չիրականացման հետևանքները)՝ հնարավորություն տալով զարգացնելու քննադատական մտածողությունը, և ինքնուրույն վերլուծություններ կատարելու հմտությունները:

Ավագ դպրոցի աշակերտները հիմնական դպրոցում արդեն ստացել են բավարար գիտելիքներ Հայկական հարցի միջազգայնացման վերաբերյալ, և այս նյութը ուսուցանելիս մենք հենվել ենք աշակերտների ունեցած գիտելիքների վրա, մեթոդների օգնությամբ վեր ենք հանել ունեցած գիտելիքները թեմայի շուրջ, քանի որ նոր գիտելիքներ ձեռք բերելու՝ աշակերտների հնարավորությունը մեծ մասամբ կախված է նրանց ունեցած նախնական գիտելիքների պաշարից, և «այն աշակերտները, որոնք ունեն գիտելիքների հարուստ պաշար, ավելի շատ բան կարող են վերցնել նոր ուսուցանվող նյութից»²⁴:

11-րդ դասարանում ուսուցիչը ոչ թե պետք է դառնա պատրաստի գիտելիքների փոխանցող, այլ պետք է ստանձնի ուղղորդողի դեր՝ հնարավորություն տալով նրանց մոտ զարգացնելու քննադատական մտածողությունը, և ինքնուրույն վերլուծություններ կատարելու հմտությունները: Թեմայի դասավանդման առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն թույլ է տալիս հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները կիրառել տարբեր մեթոդներ, ուսումնական հնարներ: Թեման ներկայացնել համակողմանի, կատարել վերլուծություններ, կապ ստեղծել անցյալի և ներկայի հետ, վեր հանել պատմական կերպարներ և դերային խաղի միջոցով իրականացնել ապրումակցում՝ տեղափոխելով տվյալ ժամանակաշրջան:

Ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքի 11-րդ դասարանում՝ Հայոց պատմության դասագրքում, «Հայկական հարցի միջազգայնացումը» թեման ծավալուն է: Դասագրքում ներկայացված են Սան Ստեֆանոյի պայմանագրից այն հոդվածները, որոնք վերաբերվում են Արևմտյան Հայաստանին: Ներկայացված է Հայկական հարցի էությունը, ազգային-քաղաքական գործիչների ծավալած գործունեությունը, հայկական պատվիրակության գործունեությունը, տրված է նաև մեծ տերությունների դիրքորոշումների, Անգլիայի գաղտնի համաձայնագրերի մասին տեղեկություններ²⁵:

Դասի նախապատրաստական փուլում անհրաժեշտ է վերհանել աշակերտների նախնական գիտելիքները «Հայկական հարցի միջազգայնացման» վերաբերյալ: Գիտելիքները վերհանելու հարցում կարող ենք օգտվել **«Մտազրոհ»**, **«Հարցեր կամ հարցադրումներ»** մեթոդներից: Սովորողների համար կողմնորիշ դեր են կատարում հարցերի կամ հարցադրումները մեթոդը: Այս մեթոդը «կարևոր միջոց է աշակերտների

²⁴ Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան, 2020, էջ 11:

²⁵ Մելքոնյան Ա., Չոբանյան Պ., Սիմոնյան Ա., Նազարյան Ա., Բարխուդարյան Վ., Գևորգյան Է., Խաչատրյան Վ., Հայոց պատմություն, 11-րդ դասարան, Երևան, Զանգակ հրատ., 2015, էջ 58-62:

մտածողությունը խթանելու, տեղեկատվությունը հիմնավոր ընկալելու և համակարգելու, ստեղծագործական ու քննադատական մտածողությունը զարգացնելու համար»²⁶:

Նոր թեման ներկայացնելիս՝ նախորդ դասին կիրառել են **Խառնված հերթականություններ** մեթոդը՝ տվյալ թեմայի շուրջ աշակերտների հետաքրքրությունը խթանելու և նախնական գիտելիքները վեր հանելու համար: Առանձին կաշուն թղթերի վրա գրված էր՝ Սան Ստեֆանո, 61-րդ հողված, Ն. Իգնատև, «Թղթե շերեփ», Հայկական հարց, 16-րդ հողված, «հարիսա», 6 ամիս ժամկետ, Մկրտիչ Խրիմյան, Բեռլինի վեհաժողով, հայկական մարզ, Առաքել Դադյան, «ձեր փրկությունը երկաթով կլինի» անունները, հասկացություններն և արտահայտությունները, որոնք իրար հետ կապված էին հաջորդաբար և ներկայացնում էին պատճառահետևանքային կապի մեջ գտնվող իրադարձություններ: Աշակերտները կատարեցին առաջադրանքը, վերհիշեցին թեմայի վերաբերյալ ստացած գիտելիքները:

Բուն նյութին անդրադառնալիս մեր առջև դրել էինք խնդիրներ, որոնք լուծելուց հետո հասկանալի էր դառնալու Հայկական հարցի ձախողման պատճառները: Խնդիրներից էր պարզել

- Ինչպե՞ս Հայկական հարցը դուրս եկավ միջազգային ասպարեզ:
- Հասարակական ու քաղաքական ի՞նչ պայմանների բերումով այդ հարցը դարձավ միջազգային իրավունքի օբյեկտ:

• Ինչո՞ւ Սան Ստեֆանոյի պայմանագիրը վերանայվեց Բեռլինի վեհաժողովում:

• Ինչպիսի՞ հետևանք ունեցավ Հայկական հարցը մեծ տերությունների վարած քաղաքականության արդյունքում:

• Ինչո՞ւ ծրագրերը հաջողություն չունեցան:

• Ինչպե՞ս Բեռլինի կոնգրեսը փոխեց ռուս-թուրքական պատերազմի արդյունքները:

Աշակերտների կողմից նյութը ամբողջությամբ յուրացնելուց հետո թեման ամփոփել են դաս-միջոցառումով, որտեղ կիրառել են հետևյալ մեթոդները.

Մեթոդ 1. «Սան Ստեֆանոյի պայմանագիրը և Հայկական հարցը» ենթաթեման ուսուցանելիս դասախոսության միջոցով քննարկել և վերլուծել ենք Հայկական հարցի միջազգայնացումը, միջազգայնացմանը նպաստող պայմանները, արևմտահայ հասարակական շրջանների ծավալած գործողությունը, Սան Ստեֆանոյի պայմանագիրը

²⁶ Ղուկասյան Ա., Հայոց պատմություն 8-9-րդ դասարաններում: Ուսուցչի ձեռնարկ, Երևան, Մանուկ, 2013, էջ 23:

ու հայերին վերաբերվող հողվածները և դրա հետ մեկտեղ տեսասահիկով ցուցադրվում էր Սան Ստեֆանոյի պայմանագրին վերաբերվող նկարներ, հողվածները: Վերջում աշակերտները կատարեցին խմբային աշխատանք՝ ներկայացնելով իրենց կարծիքը, տեսակետը կապված Հայկական հարցի միջազգայնացման և Սան Ստեֆանոյի պայմանագրի հայերին վերաբերվող հողվածների հետ:

Առաջադրանք 1. Կարող էին արդյո՞ք Սան Ստեֆանոյի պայմանագրով Արևմտյան Հայաստանին տալ ինքնավարություն Ռուսաստանի հովանու ներքո (Ներսես Վարժապետյան): Եթե այո՝ ինչպե՞ս, եթե ոչ՝ ինչո՞ւ:

Առաջադրանք 2. Եթե տրվեր ինքնավարություն Ռուսաստանի հովանու ներքո արդյո՞ք կզարգանար Արևմտյան Հայաստանը: Հիմնավորե՛ք պատասխանը:

Հնչեցին բանավոր պատասխաններ: Աշակերտները մեկնաբանեցին, պարզաբանեցին իրենց կարծիքները, տեսակետները և հանգեցին այն եզրահանգման, որ հնարավոր էր տալ ինքնավարություն, եթե Ռուսաստանը դա ցանկանար: Եվ ավելացրեցին, որ Արևմտյան Հայաստանը Ռուսաստանի հովանու ներքո գերծ կմնար հալածանքներից և բռնություններից:

Մեթոդ 2. «Սան Ստեֆանոյի պայմանագիրը և Հայկական հարցը» ենթաթեման ամփոփելուց հետո օգտվել ենք **ԳՈՒՍ (գիտեմ-ուզում եմ սովորել-սովորել եմ)** աղյուսակից՝ ներկայացնելով «Հայկական հարցը Բեռլինի վեհաժողովում» ենթաթեման:

ԳՈՒՍ աղյուսակի միջոցով աշակերտները վեր են հանում դասի նպատակը: Առաջին և երկրորդ սյունակները լրացրել ենք դասի ընկալման փուլում, իսկ երրորդ սյունակը՝ դասի կշռադատման փուլում՝ ամփոփելով և ի մի բերելով սովորածը: Աշակերտները, որ սկզբում գտնում էին, որ 16 և 61-րդ հողվածները միմյանցից բովանդակային առումով այդքան էլ չեն տարբերվում, բայց աչքի առաջ ունենալով հողվածները (տեսասահիկ) եկան այն համոզման, որ դրանք ոչ միայն էականորեն տարբերվում են, այլ նաև 61-րդ հողվածով սուլթանին հնարավորություն էր տրվել որոշելու հայերի հետագա ճակատագիրը՝ իրականացնելով կոտորածներ ընդհուպ հասնելով Հայոց ցեղասպանության:

Գ Գիտեմ	Ու Ուզում եմ սովորել	Ս Սովորել եմ
<p>1877-1787թթ. ռուս-թուրքական պատերազմում Ռուսաստանի հաղթանակի մասին: Հայերի մասնակցությունը պատերազմում: Սան Ստեֆանոյի պայմանագրի մասին: Ինչո՞ւ պայմանագիրը կոչվեց նախնական: 16-րդ, 25-րդ և 27-րդ հոդվածները:</p>	<p>Բեռլինի կոնգրեսի հրավիրման պատճառը: Մեծ տերությունների դիրքորոշումը: Բեռլինի կոնգրեսից առաջ և հետո հայերի ծավալած գործունեությունը: Ռուսաստանի զիջողական քաղաքականության պատճառները: Ծրագրերի անհաջողության մատնվելու պատճառը: Պատվիրակության ոչ ճիշտ կազմ ունենալու պատճառը: Ինչո՞ւ պատվիրակությունը ղեկավարեց հոգևորական:</p>	<p>Հայկական հարցի միջազգայնացման նախադրյալներն ու հետևանքները: Մեծ տերությունների վարած շահադիտական քաղաքականության մասին: Թուրքիային օգնելու Անգլիայի իրական պատճառը: Ռուսաստանի վարած զիջողական քաղաքականության պատճառները: 16-րդ և 61-րդ հոդվածների բովանդակության նշանակությունն ու կարևորությունը: Բեռլինի կոնգրեսի հետևանքները հայերիս համար : Սովորեցի, որ չպետք է հույս կապել օտար պետությունների հետ, պետք է սեփական ուժով առաջնորդվել :</p>

Մեթոդ 3. Ընդարձակելով դասագրքում գետեղված նյութը՝ վերլուծել ենք թե ինչո՞ւ եվրոպական տերությունները դեմ արտահայտվեցին Սան Ստեֆանոյի պայմանագրին, ինչո՞ւ Ռուսաստանը համաձայնվեց Բեռլինում հրավիրվեր կոնգրես, ինչո՞ւ Օսմանյան կայսրությունը հրաժարվեց Սան Ստեֆանոյի պայմանագրից, և ընդունեց կոնգրեսի պայմանագիրը, ի՞նչ շահեցին եվրոպական տերությունները աջակցելով Օսմանյան Թուրքիային, ինչո՞ւ հայկական պատվիրակության կողմից ներկայացված ծրագիրը ձախողվեց: Վեր ենք հանել մեծ տերությունների քաղաքական շահերը, քննադատել ենք Անգլիայի վարած քաղաքականությունը, քննարկել անգլո-ռուսական և անգլո-թուրքական համաձայնագրերը: Համեմատություններ տարել համաձայնագրերի միջև՝ փորձելով հասկանալ՝ ինչ որոշում կկայացներ Անգլիան, եթե նրա դիրքորոշումը լիներ հայանպաստ կամ եթե գրավեր չեզոք դիրք, ապա ինչ լուծում կստանար Հայկական հարցը:

Մեթոդ 4. Մ. Խրիմյանի, Խ. Նարբեյի, Նուբար փաշայի ծրագրերին ծանոթանալուց հետո վերլուծել ենք **m-աձև աղյուսակի** միջոցով: Մեկնաբանել ենք նրանց կարծիքները

ծրագրերի մասին, մեջբերել Կ. Պոլսո պատրիարք՝ Ներսես Վարժապետյանի խոսքերը Նուբար փաշայի ծրագրի մասին:

Քննարկել և վերլուծել ենք Մկրտիչ Խրիմյանի, Խորեն Նարբեյի և Պողոս Նուբարի ծրագրերը: Աշակերտների կարծիքները տարբեր էին: Աղյուսակը լրացնելուց հետո՝ ամփոփման ժամանակ, վերաձևակերպեցինք, վերաշարադրեցինք, հանրագումարի բերեցինք աշակերտների կարծիքները և վերջում բնութագրեցինք ծրագրերը մեկ բառով կամ արտահայտությամբ

Մ. Խրիմյան	Խ. Նարբեյ	Նուբար փաշա
Ինքնավարություն	Ռուսամետ քաղաքականություն	Չափավոր և ճիշտ ծրագիր

Մեթոդ 5. Դերային խաղով ներկայացրել ենք Բեռլինի կոնգրեսը և դրանից հետո մեր պատվիրակության դիմելը Եվրոպական տերություններին, որպեսզի վերանայվի Հայկական հարցին վերաբերվող հողվածը: Դերային խաղին մասնակցում էին Մկրտիչ Խրիմյանը²⁷, պետությունների պատվիրակության անդամները²⁸: Ներկայացրել ենք պայմանագրի այն կետերը, որոնք վերաբերվում էին հայերին և որոնք Անգլիայի առաջարկությամբ փոփոխության ենթարկվեցին օգուտ Օսմանյան կայսրության:

Դերային խաղով ներկայացրել ենք Խրիմյան Հայրիկի և դեսպանների հանդիպումը: Յուրաքանչյուր դեսպան Խրիմյան Հայրիկին մերժում էր այն երկրի լեզվով, որի դեսպանն էր հանդիսանում: Աշակերտների մոտ տպավորվել էր Օ. Բիսմարկի և Թուրքիայի պատվիրակության հետ ունեցած խոսակցությունը, որից պարզ էր դառնում հայերի հետագա ճակատագիրը²⁹: Քարտեզով ներկայացրեցին Արևմտյան Հայաստանի այն տարածքները, որոնք նշված էին պայմանագրով³⁰:

²⁷ Տե՛ս, Հավելված 1, (Նկար 1,2):

²⁸ Գիրք պատմության ուսուցման, Ինչո՞ւ, Ինչպե՞ս, «Պարադիգմա» կրթական հիմնադրամ, Երևան, 2020, էջ 152:

²⁹ Տե՛ս, Հավելված 2 (Նկար 3,4):

³⁰ Տե՛ս, Հավելված 3 (Նկար 5):

Մեթոդ 6. Թեման ամփոփելուց ու քննարկելուց հետո կիրառել եմ «Ի՞նչ, Որտե՞ղ, Ե՞րբ» մեթոդը (այս մեթոդը կազմվել է մեր կողմից), որը օգնում ստուգել, թե ինչ սովորեցին աշակերտները և յուրացրածից ելնելով արագ կողմնորոշվել և պատասխանել հարցերին

Ի՞նչ	Որտե՞ղ	Ե՞րբ
Պայմանագիր	Սան Ստեֆանո	1878թ. փետրվարի 19
Կոնգրես	Բեռլին	1878թ. հունիսի 1
Պատվիրակություն	Եվրոպա, Ռուսաստան	1878թ. մարտ-մայիս
Ծրագիր	Արևմտյան Հայաստան, Եգիպտոս	1878թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով «Հայկական հարցը Բեռլինի վեհաժողովում» թեման հանգել ենք մի շարք եզրակացությունների:

1. Հայկական հարցը ի սկզբանե վերաբերվում էր արևմտահայությանը: Այն Օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ գտնվող արևմտահայերի հարցն էր, ովքեր ոչ միայն կայսրության, այլ նաև մյուս հպատակ մահմեդականների կողմից ենթարկվում էին հասարակական և քաղաքական ճնշումների, կրոնական հալածանքների և բռնությունների:
2. Ռուս-թուրքական պատերազմն ավարտվեց Ռուսաստանի հաղթանակով: Ռուսական զորքը հաղթանակ տանելով ռուս-թուրքական պատերազմում՝ կարողացավ ռազմական պայքարը տեղափոխել դիվանագիտական ասպարեզ՝ պարտված Թուրքիային թելադրելով իր պայմանները: Ռազմական և դիվանագիտական պայքարի հաղթանակն եղավ Սան Ստեֆանոյում կնքված պայմանագիրը:
3. 16-րդ հոդվածը ռուսական դիվանագիտության հաղթանակն էր, քանի որ այն Ռուսաստանին հնարավորություն էր տալիս միջամտելու Թուրքիայի ներքին գործերին՝ ցույց տալով, որ Ռուսաստանը հետաքրքրված էր ոչ միայն սլավոն, այլ բոլոր քրիստոնյա ժողովուրդների վիճակով:
4. Սան Ստեֆանոյի պայմանագիրը կոչվեց նախնական, քանի որ այն չէր քննարկվել մեծ տերությունների հետ: Փաստենք, որ Սան Ստեֆանոյի պայմանագրի կնքումից հետո Անգլիայի վարած հակառուսական քաղաքականությունն ավելի ակնհայտ դաձավ: Նրա ջանքերով եվրոպական մեծ տերությունները նույնպես դեմ արտահայտվեցին Սան Ստեֆանոյի պայմանագրին՝ պահանջելով այն վերանայել և ենթարկել փոփոխության:
5. Ռուսաստանը միայնակ մնալով եվրոպական տերությունների դեմ, այլ ելք չունենալով, ստիպված եղավ համաձայնվել պայմանագրի վերանայմանը: Ռուսաստանի զիջողական քաղաքականությանը նպաստեց նաև նրա թե՛ ֆինանսապես, թե՛ ռազմականապես պատերազմին պատրաստ չլինելը:

Տերություններից յուրաքանչյուրն առաջ քաշեց սեփական շահը՝ մոռանալով Օսմանյան Թուրքիայի լծի տակ կեղեքվող քրիստոնյա ժողովուրդներին:

6. Հայ ժողովուրդը իր ազատագրության ճանապարհին կանգնեց անգլո-ռուսական հակամարտության առաջ. Ռուսաստանի կողմից Արևմտյան Հայաստանի գրավումը կնշանակեր ոչ միայն Թուրքիայի քայքայման, այլ նաև Անգլիայի ազդեցության թուլացման սկիզբը Արևելքում: Եվ Անգլիան կանխելու համար տարածաշրջանում Ռուսաստանի դիրքերի մեծացումը կազմակերպեց Բեռլինի կոնգրեսը:
7. Բեռլինի կոնգրեսը ձևափոխեց տարածաշրջանի քարտեզը, Ռուսաստանը թելադրողի դիրքը զիջեց և տարածաշրջանում իր միանձնյա դերը կիսեց գլխավորապես Անգլիայի հետ: Բեռլինի կոնգրեսը նպաստավոր եղավ այն տերությունների համար, ովքեր չմասնակցելով պատերազմին ունեցան տարածքային ձեռքբերումներ:
8. Բեռլինի վեհաժողովում 16-րդ հոդվածը փոխարինվեց 61-րդի: Առաջին հայացքից այս հոդվածը կարծես Սան Ստեֆանոյի 16-րդ հոդվածի բովանդակության կրկնությունը լիներ, սակայն այս հոդվածով ամբողջությամբ ձախողվեց Հայկական հարցի լուծումը: Եթե 16-րդ հոդվածով նախատեսվում էր միայն Ռուսաստանի վերահսկողությամբ իրականացվեր բարենորոգումները, ապա 61-րդ հոդվածով այն դրվեց նաև մեծ տերությունների վերահսկողության ներքո: Ռուսական բանակի հեռանալը ծանր հետևանք ունեցավ արևմտահայության համար: Եթե 16-րդ հոդվածում նշվեց Հայաստան անվանումը, ապա 61-րդ հոդվածում այն փոխարինվեց հայաբնակ մարզեր անվանումով: Եթե 16-րդ հոդվածը իր թերություններով հանդերձ կարող էր դրական ազդեցություն ունենալ արևմտահայության համար, ապա 61-րդ հոդվածով վճռվեց արևմտահայության հետագա ճակատագիրը:
9. Ընդունենք, որ անգլիական դիվանագիտությունը Բեռլինի վեհաժողովում հաղթեց. և՛ ժամանակը, և՛ իրավիճակը Անգլիան օգտագործելով ի օգուտ իրեն կարողացավ տարածել իր դիրքն ու ազդեցությունը տարածաշրջանում, ունեցավ տարածքային ձեռքբերում: Նրա դիվանագիտության շնորհիվ պատերազմում հաղթանակած Ռուսաստանը պարտություն կրեց:

10. Փաստենք, որ 61-րդ հոդվածով եվրոպական տերություններն Օսմանյան կայսրությանը տվեցին ազատություն՝ հասկացնելով, որ հանուն հայերի Եվրոպան չի վատացնի հարաբերությունները Օսմանյան Թուրքիայի հետ: Կայսրությունը «լուծեց» Հայկական հարցը իրեն բնորոշ ձևով և այդ պահից սկսած իրականացրեց կոտորածներ՝ հասցնելով ցեղասպանության:
11. Թեմայի դասավանդման առանձնահատկությունների վերաբերյալ նույնպես ունենք եզրահանգումներ:
- Փաստենք, որ «Հայկական հարցը Բեռլինի վեհաժողովում» թեմայի վերաբերյալ ընտրված մեթոդների համալիրը նպաստեց, որպեսզի աշակերտները հեշտ և լիովին ըմբռնեն, խորացնեն գիտելիքները Հայկական հարցի վերաբերյալ: Մեթոդներն օգնեցին, որպեսզի աշակերտները դասի վերջում պատմական գիտելիքների հիման վրա ձևավորեն կարողություններ՝ պատմական երևույթները ճիշտ հասկանալու և մեկնաբանելու համար:
12. Նկատենք, որ աշակերտները «Հայկական հարցը Բեռլինի վեհաժողովում» թեմայի եզրահանգման ժամանակ առաջ քաշեցին իրենց կարծիքները, համեմատական վերլուծությունների հիման վրա հասկացան, որ ժամանակն և մեծ տերությունները հաշվի չեն նստում թույլ, հպատակ, աղերսագիր ներկայացնող ժողովուրդների հետ: Նրանք ընդունում և լսում են այն ներկայացուցիչներին, ովքեր կարողանում են խոսել ուժի, շահի, հաղթանակի լեզվով՝ հիմնավորելով, որ դրանց կողքին ճիշտ ընտրված և կատարված դիվանագիտական քայլերն ի վերջո հանգեցնում են զենքի և մտքի հաղթանակի փայլուն դրսևորման:
13. 11-րդ դասարանի աշակերտները հիմնավորված ներկայացրեցին իրենց տեսակետները, մեկնաբանեցին, պարզաբանեցին իրենց մոտեցումները ծրագրերի և մեծ տերությունների վարած քաղաքականության հանդեպ՝ մեղադրելով արևմտահայությանը, որ նրանք անտեսել էին գլխավոր հարցը՝ ինչո՞ւ պետք է մեծ տերություններն օգնեին նրանց: Աշակերտների պնդմամբ, եթե այս հարցն առաջ քաշեին մինչ Բեռլինի կոնգրես մեկնելը և պատասխանեին իրենց իսկ հարցին, ապա պատմությունն այլ ընթացք կունենար:

Այսպիսով, հաշվի առնելով վերոհիշյալ կետերը, փաստեցինք, որ Հայկական հարցը Բեռլինի վեհաժողովում մնաց անլուծելի և հենց այդ անլուծելիությամբ դարձավ պատուհաս արևմտահայության համար:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով հետազոտության արդյունքներն, ինչպես նաև վերոնշյալ փաստերն ու վերլուծությունն առաջարկում եմ 11-րդ դասարանի Հայոց պատմություն դասագրքում (ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքում) ավելացնել ևս մեկ թեմա՝ երկու ենթաթեմայով. 1-ին՝ «Մեծ տերությունների դիրքորոշումներն և Հայկական հարցը», 2-րդ՝ «Ծրագրերի ձախողման պատճառները»: «Մեծ տերությունների դիրքորոշումներն և Հայկական հարցը» ենթաթեմայի բովանդակության մեջ ներկայացնել անգլո-ռուսական և անգլո-թուրքական համաձայնագրերի այն կետերը, որոնք վերաբերվում են Հայկական հարցին (դասագրքում քիչ է ներկայացված):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀԱԱ, Ֆ. 56 (Էջմիածնի հայոց լուսավորչական յեկեղեցու), ց. 14, գ. 96:

Գրքեր

2. Ազատյան Հ. , Բախտորոշ պայմանագրեր, Երևան, 2002, 169 էջ:
 3. Աղայան Ծ. Պ. , Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976, 868 էջ:
 4. Բաղայան Խ. , «Հայկական հարցը» Սան-Ստեֆանոյի պայմանագրում և Բեռլինի կոնգրեսում, Երևան, 1955, 162 էջ:
 5. Բայրամյան Լ. Ա. , Արևմտյան Հայաստանը անգլիական իմպերիալիզմի պլաններում: XIX դարի վերջին քառորդում, Երևան, 1982, 291 էջ:
 6. Գաբրիլյան Խ. , Հայկական հարցը Արեւելեան հարցի մէջ (1860-1880), Պէրութ, 1962, 272 էջ:
 7. Գիրք պատմության ուսուցման. Ինչո՞ւ, ինչպե՞ս, «Պարադիգմա» կրթական հիմնադրամ, 2020, 296 էջ:
 8. Թառոյան Կ. Ջ. , Արևմտահայերի ազատագրական պայքարը XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին, Երևան, 1980, 446 էջ:
 9. Լէօ, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915, 404 էջ:
 10. Լէօ, Թիրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հատոր առաջին, Երևան, 1994, 203 էջ:
 11. Խաչատրյան Ս. , Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020, 74 էջ:
- Էլեկտրոնային տարբերակը՝ <http://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf>:
12. Կիրակոսյան Ջ. , Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 70-ական թթ.), Երևան, 1978, 362 էջ:

13. Ղուկասյան Ա. , Հայոց պատմություն 8-9-րդ դասարաններում: Ուսուցչի ձեռնարկ, Երևան, 2013, 88 էջ:
14. Մելքոնյան Ա. , Չոբանյան Պ. , Սիմոնյան Ա. , Նազարյան Ա. , Բարխուդարյան Վ. , Գևորգյան Է. , Խաչատրյան Կ. , Հայոց պատմություն, 11-րդ դասարան, Երևան, Զանգակ հրատ. , 2015, 239 էջ:
15. Չերազ Մ. , Թե ինչ շահեցանք Պերլինի վեհաժողովէն, Կոստանդնուպոլիս, 1878, 29 էջ:
16. Պարսամյան Վ. Ա, Հարությունյան Շ. Ռ, Հայ ժողովրդի պատմություն (1801-1978թթ.), Երևան, 1979, 752 էջ:
17. Պողոսյան Ս. Ա. , Հայաստանի ինքնավարության ծրագրերը 1878թ. , Երևան, 2018, 144 էջ:
18. Սարուխան, Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրութիւնը Թիւրքիայում (1860-1910), հ. Ա. , Թիֆլիս, 1912, 480 էջ:
19. Օտար աղբյուրները, Հայաստանի և հայերի մասին, Հ. 7: Թուրքական աղբյուրներ, Հ. 4, Երևան, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ. , 1972, 258 էջ:
20. Yerasimos S., Ahmad F., Dadrian V., Copeaux E., Maraşliyan L., Maleville G., Loti P., Feigl E., Shaw S., Shaw E., Ahmed K., Alboyaciyani A., Hartill L., Harbord G., 1856-1923 Emperyalizm Kısacında Türkler Ermeniler Kürtler, Ersal Yavi, 2001, 391 s.:

Հոդվածներ

21. Կեսար Ա. , Հայկական հարցը 19-րդ դարուն, Վեմ, Փարիզ, 1938, N 4, հոկտեմբեր-դեկտեմբեր, 1-26 էջ:
22. Սահակյան Ռ. , Հայկական հարցը և Ֆրանսիան (1870-1890-ական թթ.), «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1994, թիվ 1-2, 132-155:
23. Сан-Стефано. Записки графа Н. П. Игнатъева. СЪ примечаниями А. А. Башмакова, "Петроградъ", 1916, с. 1-109:

Էլեկտրոնային տարբերակ՝

<https://viewer.rsl.ru/ru/rsl01004210503?page=1&rotate=0&theme=white>

Ամսագրեր և մամուլ

24. Հայաստանի կոչնակ, Նիւ Եորք, 1923, թիւ 18, մայիսի 5:

25. Մուրճ, Թիֆլիս, 1907, N 2, Փետրուար, Անկախ, Մօտիկ անցեալից, 60-70 էջ:

26. Նոր-Դար, Թիֆլիս, 1895, N 21, Փետրուար 4:

ՀԱՎԵԼՎԱԾ

Հավելված 1 (Նկար 1, 2)



Հավելված 2 (Նկար 3, 4)



Հավելված 3 (Նկար 5)

